

ԳՐԱԽՈՍՈՒԹՈՒՆ

«ԻԲԵՐԱԿԱՆ-ԿՈՎԿԱՍՅԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ», 1, 1946

Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիա, ակադ. Ն. Մառի անվան
Լեզվի ինստիտուտ. էջ 1—8+401. Խմբագիր Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի իսկական ան-
դամ Վառլամ Թոփուրիա

Հույս է տեսել Վրացական ՍՍՌ Գիտու-
թյունների Ակադեմիայի ակադ. Ն. Մառի
անվան Լեզվի Ինստիտուտի գիտական աշ-
խատությունների անդրանիկ ժողովածուն՝
«Իբերական-կովկասյան լեզվաբանություն»
վերնադրով, որ իր բովանդակությամբ հա-
րուստ է, բազմակողմանի ու հետաքրքրա-
կան:

«Իբերական-կովկասյան լեզվաբանու-
թյուն» ժողովածույում հրատարակված են
մեծ մասամբ Հայրենական մեծ պատերազմի
ժամանակաշրջանում Վրաց. ՍՍՌ լեզվա-
բանների ձեռք բերած նվաճումները քարթ-
վելական և մյուս կովկասյան լեզուների գի-
տական մշակույթի ասպարիզում:

Այդ ուսումնասիրությունները վերաբե-
րում են քարթվելական լեզուներին ու մյուս
կովկասյան լեզուների հետ այդ լեզուների
փոխադարձ կապին: Պետք է նշել նաև այն,
որ այս ուսումնասիրությունների մեջ հայա-
գիտությունը օգտագործված է վրացագի-
տության հետ առնչված: Այդ զգալի է տվյալ
ժողովածուի մեջ զետեղված հոդվածների
զրեթե մեծ մասի մեջ, որտեղ դրա անհրա-
ժեշտությունը զգացվել է: Լավ կլիներ, որ
մեզ մոտ էլ հայագիտության համար պատ-
շաճ կերպով օգտագործվեր վրացագիտու-
թյունը:

Ժողովածուի ուսումնասիրությունները
պարզում են քարթվելական լեզուների հընչ-
յունական, ձևաբանական և իմաստա-ստուգա-
բանական որոշ խնդիրներ՝ մյուս կովկասյան
լեզուների հետ կապված: Զետեղված է
քսաներեք տարբեր հոդված և մասնակցում
են քսան հեղինակներ:

Առաջին հեղինակն է Գիորգի Ռոզավիսո, որի
հոդվածն է «Կոկորդային պայթուցիկ հնչյուն-
ները քարթվելական և ադիգերեն լեզուներ-
ում»: Այս ուսումնասիրությունը բավական
հետաքրքրական է: Հիդիակը նշանակալից

արդյունքների է հասել ընդհանուր կովկաս-
յան հնչյունաբանական սխեմայի պրոբլեմի
պարզաբանման տեսակետից: Նրան հաջող-
վել է մի շարք բառեր ստուգաբանել, ինչ-
պես օրինակ՝ վրաց. և մեդր. կա-կալ ի ռըն-
կույզ բառը կազմված է կալ բառարմատի
կրկնության հնչյունափոխությունից (*կալ-
կալ > կա-կալ): Կալ բառարմատը մեդրեյե-
րեն տարբեր բառաձևերում նշանակում է
հատ, մեկ, օր. միր-կալ ի օրկու հատ:
Նույն կալ-բառարմատը (վերջին բաղաձայնի
անկումով) վրացերենում պատահում է, որպես
մասնիկ, օր. մարտա-կա մեկ հատ, միայն
մեկ, առանձին: Ղվելա-կա բառն հատը,
ամեն մեկը: Կալ-բառարմատի տարբերակն
է համարում սվան. գաք միայն, մենակ և
վրաց. -գա մասնիկը հատը, մեկ սկզբնա-
կան նշանակությամբ և այլն: Այսպիսի ստու-
գաբանություններ, որ բավական համոզիչ
են ու նշանակալից, քիչ չեն Ռոզավայի հոդ-
վածում: Մյուս կողմից հեղինակը ցույց է
տալիս, որ ադիգերեն լեզվատարրն արտա-
հայտված է վրաց. մի շարք ազգանուններում:
Ադիգերեն լեզվատարրից է -գ'վա (<-գ'աւա),
որ նշանակում է ճագ, որդի, զավակ՝
(որի արմատական սկզբի հնչյունը կոկոր-
դային պայթուցիկ հնչյուններից է): Օրա
տարբերակներն են՝ -ղվա (<-ղուա), -խվա
(<-խուա), -կվա (<-կուա), -զվա (<-զուա),
-ֆվա, որոնք պահպանված են քարթվելական
մի շարք ազգանուններում և նշանակում են
որդի, զավակ: այսպես օր. կան ազգա-
նուններ՝ 1) -ղուա (>ղվա) բառամտոնիկով՝
բաժա-ղուա «ճանճի որդի», ադիգերեն բաժա
«ճանճ»+ղ'ուա «որդի», Տարա-ղուա (Տարա-
յի որդի), Փա-ղվա «Փայի որդի»: 2) -խուա
բառամասնիկով՝ Ռա-խուա «Ռոյի որդի», Հա-
բա-խուա «Հարայի որդի», Զու-խուա «Զուի
որդի»: 3) -կվա բառամտոնիկով՝ Քալա-կվա-
նե «Քալայի որդի», Վե-կուա «Վեի որդի»:

Ու-կվա-վա «Ռեի որդի», 4) - գուտ (Մ-դվա) բառամասնիկով՝ Ձի-գուա «Ձիի որդի», Լու-գուա «Լուի որդի», Սի-գուա «Սիի որդի»։ 3) -վա բառամասնիկով՝ Բու-վա-մե «Բուի որդի», Սալու-վա-մե «Սալուի որդի», Ձի-վա-նա || Ձի-վա-Յա-իա «Ձիի որդի» և այլն։ Այստեղ հեղինակը լավ կլինե՞ր, եթե հիշյալ աղ-գանուներում պահպանված (դուա || խուա ||) կուա (|| դուա || քվա) «ձագ, որդի, զավակ» բառամասնիկը, որի լրիվ ձևը, անշուշտ, կուար է, կապեր քարթվել, մի շարք այլ բառաձև-վերում պահպանված կուար || կուեր «ձագ, որդի» բառաբանում հետ, ինչպես օր՝ վրաց. բո-կուեր-ի «կենդանու ձագ», գիա-կեուլ-ի || դե-կեուլ-ի «կենդանու էղ ձագ», քարա-կեուլ-ը «կենդանու ձագ», սվան, փի-կվնա «լակոտ», փի-կու < փի-կուար-ի «կրտած այծ», և լե-տ-կվար-ի «կրտալու այծ» և այլն։ Մրանց կվար < կուար «ձագ, որդի» արմատի հետ ես կապում եմ հյ. կոր-լու «լակոտ, բոթոթ (նաև՝ առյուծի ձագ)», կոր-ն-ալ «պստի լակոտ» բառաձևերի կոր արմատը։

Երիտասարդ լեզվաբան Կոթա Ձիձիգուրին այս ժողովածուի մեջ հանդես է դալիս երկու հոդվածով՝ «Ձայնավորների կոմպլեքսների հնչյունաբանական անցումների ընդհանուր հիմունքը վրաց բարբառներում և դաներենում» և «Մեղրելիներն անանցի հետքը վրացի-րենում»։ Հեղինակն առաջին հոդվածում ցույց է առիս, թե ինչպես վրացերեն հինգ ձայնավորների իրար տարբեր մեացման հետևանքով առաջ է դալիս 25 հնչյունակոմպլեքս որոնք բաժանվում են երեք կարգի։ Առաջին կարգում տեղի ունի առաջընթաց ախիմիացիա (օր. աու → ոու → ուու → ու), որ բնորոշ է արեմայան Վրաստանի բարբառներին և դաներենին, իսկ արևելյան Վրաստանի բարբառներից՝ թուշերենին և մասամբ ձորեցի փերեիդներենին։ Երկրորդ կարգի հնչյունակոմպլեքսներում տեղի ունի գիսիմիացիա (օր. ուա → վա → ա), որ բնորոշ է ամբողջապես վրաց լեզվին և միաժամանակ դաներենին։ Երրորդ կարգի հնչյունակոմպլեքսները ձգտում են միացման ու պարզեցման (օր. աա → ա → ա), որ տարբեր բարբառներում տարբեր ձևերով են արտահայտվում։ Հնչյունակոմպլեքսների զարգացման կատարյալ

պատկեր է ստանում դաներենը, որտեղ երկ-ձայնավոր հնչյունակոմպլեքսից արդեն ստացված է մի ձայնավոր, իսկ վրաց բարբառները այդ զարգացման տարբեր աստիճաններում են գտնվում։ Դրանցից բավական հետո են գնացել թուշերենն ու աճարիերենը, որտեղ զարգացած է արդեն երկար ձայնավորը։

Ե. Ձիձիգուրու մյուս հոդվածն է «Մեղրելիներն անանցի հետքը վրացերենում» (ստուգաբանական դիտողություն)։ Այդ անանցն է մեղր. -ոս. որ պահպանված է վրաց բարբառներում (օր.՝ ոաճերենում) գործածվող, որ՝ մա-թի-ոչ-ի (|| մա-թի(ոս)-ոչ-ի = վրաց. զրակ. մա-թի-ոս-ար-ի «մուրաղական») բառաձևում։

Ժողովածույում երկու հոդված էլ ունի Սերգի Ժյուրեթի. Դրանք են՝ «Սվաներեն ձայնավորները բազմաբաներ և ունանազիրներ» և «Ձայնարկությունը նոր զրական վրացերենում»։ Մրանցից առաջինը վերաբերում է սվաներենի հնչյունաբանությանը։

Քարթվելական լեզուների մեջ սվաներենը, Նատկապես նրա վերին բալի բարբառը, ամենահարուստն է բաժանացված ձայնավորներով, որոնց թիվը հասնում է 20-ի։ Այդ հնչյունների մասին եղած ոչ փորձառական դիտողությունները որոշ սխալանքի մեջ են պահել շատ հետազոտողներին։ Նույնիսկ այնպիսի հմուտ ու հանճարեղ հետազոտող, ինչպիսին Ն. Մառն է, այս տեսակետից հանդիպում էր որոշ դժվարությունների. նա մի տեղ նշում է՝ «Են ուշ նկատեցի ուղղությունում ձայնավորների երկարությունը և ոչ միանգամից ու ոչ էլ բոլորովին լավ յուրացրի փափուկ ա, որ սկզբում հաճախ շփոթում էի յու-ի հետ»։ Սվաներենի ձայնավորների ստույգ ուսումնասիրությունը պարզում է այդ խոսվածքի հնչյունաբանական և ձևաբանական շատ երևույթներ, ժղենտին մեծ աշխատանք է կատարել սվաներեն ձայնավորների փորձառական ուսումնասիրությունը բնագավառում և նշանակալից արդյունքների է հասել։ Սվաներեն ձայնավորների ստույգ պարզման համար նա օգտագործել է արվեստական բնույթի և ռենտգենադրություն մեթոդները։

Փլենտու մյուս հոդվածն է «Ձայնարկությունը նոր զրական վրացերենում»։ Վրաց լեզուն հարուստ է ձայնարկություններով, որոնք արտահայտում են մարդկային բարդ զգայություններ և հոգեկան տրամադրություններ։ Դրանց հատկանիշը ձայնի յուրահատուկ արտաբերումն ու առողանությունն է։ Այս պատճառով էլ ձայնարկություններն ու-

¹ Ա. Մուրվալյան — ձայնավրացական բառային գույզադիտությունները, Կոր ին բառի տակ, էջ 61—63. Երևանի Պետական Համալսարանի Ն. Մառի անվան կարիքնետի աշխատություններ, № 2, 1947.

² Ձայններն ստելով հասկացվում է ճանքերն մեզ բերեցին

նեն ուժեղ երանգավորում, հարուստ առողանակտն-արաարեբական և հնչյունաբանական կողմ, բան խոսքի մյուս մասերը: Նրանց նշանակութունները բազմազան են և արտահայտում են հիացմունք, ուրախություն, հաճույք, կոչ, բավականություն, զղվանք, ատնջանք, ծաղր և այլն: Հեղինակը նոր անսանկյունով ուսումնասիրել է վրաց նոր գրականության արժանավայել ներկայացուցիչներին: Բերում է ղուզահեռներ նաև մյուս լեզուներից, օր.՝ Վրաց. վեհ = գերմ. weh. վրաց. չու = ռուս. чы. վրաց. ուհ = ռուս. ух, վրաց. ահա = գերմ. ahn, չեխ. aha և այլն: Այսպիսով, վրացերեն շատ ձայնարկություններ հնչյունակոմպլեքսի և իմաստաբանական անսակետից նման են հնդկավրոպական և այլ լեզուների ձայնարկություններին: Սրանք գոյացել են մեծ մասամբ իրարից անկախ անշուշտ ընդհանուր լեզվամտածողության հողի վրա: Այսպիսի դեպքերում պարզ է, որ փոխառության կամ փոխանցման խնդիր չի կարող լինել: Այնուհետև հեղինակը հետաքրքիր ձևով ցույց է տալիս վրացերեն այն ձայնարկությունները, որոնք ծագում են ատանձին, անկախ բառերից, այսպես օր.՝ դախ (< դախուդե անայիր տես.), բեչա (< բեդչավի տեսաբախտ), բու (< բալո օղջի), բինո || բինոս օայ տղա, ոցո (< վաժո օայ տղա) և այլն:

Սղումը հանդիսանում է քարթվելական լեզուների հնչյունաբանական հիմնական երևույթներից մեկը: Դա լայն չափով տարածված է սլավոնների երեք բարբառում (վերին-բալերենում, ներքին-բալերենում և լաչխերենում), մինչդեռ զգալիորեն թույլ է արտահայտված հենց նույն սլավոնների լեռնախի բարբառում և գրեթե չի զործում ճաներեն-մեգրելիերենում, այժմ վրացերենի արեվելյան բարբառներում այդ ավելի ուժեղ է, քան արևմտյան բարբառներում. նոր գրական վրացերենում ավելի է հանգես գալիս, քան հին վրացերենի մի շարք գրական հուշարձաններում և այլն: Ահա այս խնդրի պարզաբանմանն է նվիրված Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամ Վսուլամ Թոփուրիայի ուսումնասիրությունը՝ «Սղման շուրջը քարթվելական լեզուներում»: Սա մի նշանակալից հետադադարություն է նվիրված քարթվելական լեզուների հնչյունաբանությունը, որը պարզում է սղման բնույթն ու պատմական գտրգացումը: Փաստերի վերլուծման և համեմատական հողի վրա հեղինակը պարզում է սղման պատմական զարգացումը քարթվելական լեզուներում: Պարզվում է, որ սղումը ուշ շրջանի երևույթ է. սղվում են, այս կամ

այն չափով, բոլոր ձայնավորները բառհիմքի վերջից ձայնավորով սկսվող որևէ մասնիկ ավելանալիս. դա միապեսակ տարածում չունի քարթվելական լեզուներում և նրանց բարբառներում, ինչպես նաև նրանց զարգացման տարբեր շրջաններում: Վրացական բայի մեջ դրսևորվում են նաև անվան քերականական կատեգորիաները, այդ թվում նաև՝ սուբեկտի և օբեկտի դեմքի նշանները, որոնք փոխվում են խոնարհման ընթացքում: Սուբեկտի և օբեկտի դեմքի նշանները զրվում են ընդհանրապես բայի սկզբից, բացի սուբեկտի երրորդ դեմքից: Իսկ հոգնակի թվի նշանները վրացերենում գերադանդապես բայի վերջում են զրվում, բացի առաջին դեմքի օբեկտի նշանից (որ նախդրիվ է), չին վրացերենում հոգնակի օբեկտի առաջին դեմքը երկու նշանով է դրսևորվել. դրանք են՝ մ. և գու- (որ. մո-մեց չվեմ - մո-գու-եց չվեմ օտուր մեզ): Այստեղ հոգնակիության համար առանձնառատակ է գու (այժմ գվ-), իսկ մ- նախամասնիկը ընդհանուր է նաև եղակի համար: Այս խնդրի լուսաբանմանն է նվիրված Արնոլդ Չիքոբավայի (վրաց. ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամ) ուսումնասիրությունը՝ «Հոգնակիության դրսևորման հիմնական սկզբունքը վրացերեն բայի խոնարհման սխեմայում», որտեղ հեղինակը՝ փաստական հարուստ մատերիալի հիման վրա՝ ապացուցում է, որ գու- (այսօրվա՝ գվ-) հոգնակի օբեկտի առաջին դեմքի բայամասնիկը հին վրացերենում հոգնակի գաղափար չի արտահայտել, և սրանով պարզում լեզվաբանական մի կարևոր երևույթ: Վրաց. մ- և գու- նախաբայամասնիկները, որոնք հետագայում են ձեռք բերել հոգնակի թվի գաղափար, տարբեր բարբառներից կամ լեզվաշերտերից են գալիս: «Վարդենավորում» և աշխարհիկ գրականությունների այլ հուշարձաններում արդեն տիրապետող է դառնում գու- և գուրս է մզվում մ-, ըստ որում մ- տարբերակը ձեռտում է ճաներեն-մեգրելիերենի (կամ ճաներեն-մեգրելիերենին մոտ կանգնած բարբառների) լեզվական մեջավայրին, իսկ հին վրացերենի գու- տարբերակը ընդհանուր է նաև ժամանակակից սլավոնների համար: Նորագույն վրաց գրական լեզվի համար, սկսած 18-րդ դարից, դարձյալ կողմնորոշիչ են արեվելյան բարբառները (1198 թվին նորից Բերլինին է Վրաստանի մայրաքաղաքը):

Սրկու հոգվածով հանդես է գալիս շնորհալի կին լեզվաբան Քեթևյան Լամբարիճեմ, Մեգրելիերենին է վերաբերում Լուիսաթիճեի առաջին հոգվածը և Եր ամանցը մեգրելիերեն

բայերում: Ի սարբերութիւն վրացերենի՝ մեզր. բայերի ներկա ժամանակի | և || դեմքերում զրսևորվում է -ը վերջածանցը (օր.՝ վարն-բ .ես եմ), վնարուն-բ եզրում եմ) և այլն). որի ֆունկցիոնալ համարժեքն է ճաներենում -ը վերջածանցը (օր.՝ բլսն-ը .ստատ եմ), բլուրոս-ը .ամենում եմ) և այլըն): Սրանք (մեզր. -բ և ճան. -ը) չեն արտահայտում այսօր իրենց սկզբնական գաղափարը, այն է՝ օժանդակ բայի գաղափարը ստասիկ բայերում՝ նման արխագերեն և կարարգիներեն լեզուներին (օր. արխագ. սոգրլու-ուր = կարարգ. սը-սըտ-ս .ենտատ եմ): Լեզվակուն այս երևույթը զուգադիպում է նոր վրացերենի համանման երևույթին (օր.՝ վրաց. վրի վար .ենտատ եմ, վծե-վար .պառկած եմ, վլգա վար .էկանդնած եմ, մլվլղի-վար .զնում եմ), այսպես նաև՝ վրաց. բարբառներում (օր.՝ դուրերեն վիխիւ-վար .մը-աածում եմ, վ-իվի-վար .զանգատվում եմ) և այլն): Ինչ վերաբերում է մեզր. -բ և ճան. -ը անանցների շագմանը, զրանք ծագումով էլ համապատասխան օժանդակ բայերի մաշումից են ստացված (օր.՝ -բ <՝ քրեճ, -ը <՝ քրե(ճ) || քե(ճ) .է): Այս մասնիկների ծագման հարցով զբաղվել են տարբեր լեզվաբաններ (Յագարելին, Լիփշիձեն, Դետերսը, Թոփուրիան, Զիբորափան), բայց գոհացուցիչ պատասխան չեն տվել: Լոմթաթիձեի այս օրինակելի ուսումնասիրութեան մեջ հիմնավորված է լեզվական հիշյալ երևույթը, բերված են համապատասխան ձևերը ինչպես վրացերենից ու սվաներենից, այնպես էլ կովկասյան մյուս լեզուներից և հանված է միակ հնարավոր եզրակացութիւնը:

Լոմթաթիձեի մյուս հոգվածով՝ ճիւղայալ նախադասութեան առանձնահատկութիւններից մեկը մի շարք վրաց բարբառներում՝ հեղինակը ուշադրութիւն է հրավիրում բարբառներում պահպանված շարահյուսական մի յուրահատկութեան վրա: Ճիւղայալ նախադասութեան վերջին բառի վերջին վանկի ձայնավորը երկարացված է արտաբերվում զուրերենում, անարբերենում և ինգուչերենում, որին հեղինակը տալիս է հետևյալ բացատրութիւնը. այսպիսի կախալ նախադասութիւնները լինում են որոշակի բնույթի. նրանց մեջ ենթադրվում է ցուցում այն բանի մասին, որը խոսակցի համար արգեն հայտնի է բերականական այս միջոցը կախ-

յալ նախադասութեանը տալիս է որոշակիութիւն: Հեղինակի բացատրութիւնը շատ ուշադրով է. սրա օգտին են խոսում որոշ փաստեր:

Հին վրացերենում, ինչպես սուրբկաթի, այնպես էլ ուղղակի օրեկտի դեմքի թիվը հավասարապես զրսևորվում է բայաձևերում՝ համապատասխան անանցներով: Բայց մի բանի բայ դեմքի հոգնակիութիւնը զրսևորելիս միայն անանցով չեն բավականանում և փոխարինում են այլ բայահիմքի: Այսպիսով զոյութիւն ունի մի կողմից՝ իրի գիս .ենա նտատ է) և մյուս կողմից՝ իրիմի սլսեդան .ենրանք նտատ են), ինչպես նաև՝ սզդերս ֆլլաս .զցում է քար) և հզրիս ֆլեքս .զցում է (թափում է) քարի) և այլն: Այս խնդրի լուսարանմանն է նվիրված Իվան Բուվարաբի հոգվածը «Թվապակաս բայերը հին վրացերենում», որտեղ հեղինակը սրամըտորեն պարզում է որոշ բայաձևերում պահպանված երբեմնի -խ հոգնակի անանցը, ինչպես օր.՝ վրացերենում եզակի գործ է անվում ուս-սու-սու .ենտեցրեց մեկին) (օր.՝ դաթուա բավշվի .ենտեցրեց երխային) և հոգնակի՝ դա-ու-խա <՝ դու-սու-խ-սու .ենտեցրեց շատերին): ու հնչյունի սղումով՝ դասիա բավշվերի .ենտեցրեց երխաներին): Արմատը սու է թե եզակի և թե հոգնակի ձևերում .ենտելու) գաղափարն արաանայտելու համար: Հոգնակիում հանդես է գալիս -խ մասնիկը, որ, ինչպես պարզում է հեղինակը, երբեմնի հոգնակի մասնիկներից է: Սա պահպանված է մի շարք էթնիկական անուններում՝ Ջավա-խ, Տաթ-խ, Կոլ-խ և այսօր էլ կենդանի է սվաներենում ու ադիգերեն խմբի (հյուս. հովկասյան) լեզուներում որպես հոգնակիութեան նշան (օր. սվան. արի-խ .են, կան), իկեդ-խ .զերցնում են), իուրվու-խ .տունեն) և այլն): Այսպես են վերծանված նաև մի շարք այլ բառեր, որ, անշուշտ, սրամիտ դիտողութեան արգյունք է:

Քարթվելական և մյուս կովկասյան լեզուների կապին են նվիրված մի շարք հետազոտութիւններ: Գոյութիւն ունի այն կարծիքը. թե քարթվելական և մյուս կովկասյան լեզուները ազգակից են իրար: Համապատասխան բերականական կոնկրետ փաստերը դեռևս համեմատարար սակավ բանականութեամբ են հայտարարված, բայց ստատորեն հանդիպում են տիպարական բնույթի զուգադիպումներ, որոնք, ինչքան էլ ցայտուն զրսևորված լինեն, ինքնին չեն կարող վճռել լեզուների ազգակցական փոխհարաբերութեան խնդիրը: Նույնիսկ ոչ կովկասյան

1 Այս կարգի վրացերեն բայերը կազմութեամբ նման են նոր զրսևական հայերենի բայերին՝ զերբայներով և օժանդակ բայերով կազմված բայերին:

լեզուներում էլ հաճախ հանդիպում են բարթ-վելական և մյուս կովկասյան լեզուներին բնորոշ երևույթներ: Ուստի, բնականաբար, այդ լեզուների համար նշանակալից են աւ-պաբանական ու բերականական գուգադի-պուժների միասնական սիստեմը (և ոչ թէ մասնակի բնույթի գուգադիպուժները): Տի-պաբանական գուգադիպուժների փոքր ի շա-տե միասնական սիստեմը այնուամենայնիվ գիտականորեն համոզիչ է պարձնում գեոես բերականական սակավաթիվ փաստերի վրա հիմնված դրույթի բարթվելական և այլ կով-կասյան լեզուների ազդակցութեան մասին: Բարթվելական և մյուս կովկասյան լեզուներ-րի կառուցվածքային փոխադարձ կապը սահ-մանելու համար առանձնապես հաշվի պետք է առնել սվաներենի տվյալները: Սվաներե-նում կենդանի կերպով պահպանված է բարթ-վելական լեզուների համար բնորոշ հիմնա-կան ու ախտիկ պաշարը: Սվաներենը խառը լեզու լինելու մասին առաջին անգամ որո-շակիորեն խոսել է Ն. Մառը: Այնուհետև պրոֆ. Վ. Խոփուրիան, որը իր «Սվաներեն լեզու» ուսումնասիրութեան մեջ պարզում է, որ սվան. բայի բնույթը էապես չի տար-բերվում մյուս բարթվելական լեզուների բայի բնույթից: Բայց, չնայած այս բնդհա-նուր երևույթներին, սվաներենում հանդի-պում են նաև այնպիսի բերականական ձե-վեր, որոնք սվաներենը տարբերում են վրա-ցերենից ու մեզրելերեն—հաներենից և մո-տեցնում են Դաղստանի լեզուներին, շաշնե-րեն—ինգուչերեն և, գլխավորապես, ալխա-գերեն—ադիգերեն լեզուներին: Այս տեոա-կետից կարևոր է կարգիլ Դսնդուայի ուսում-նասիրութունը՝ «Ադիգերեն ախտի պատմո-ղական հոլովը սվաներենում», որտեղ գիտա-կան համոզկերութեամբ ցույց է տրված ա-դիգերենի և սվաներենի գուգադիպուժները մի հոլովի հիման վրա:

Հին վրացերենի մի հետդիր լուսարան-ման խնդրին է նվիրված Վեթիլան Չոժեթիձեի աշխատութունը «Գան հետդիրավոր գոր-ծիական հոլովի Փունկցիայի շուրջը հիս վրացերենում»:

Բավական ուշագրավ է Աւամ Մաւտիւո-սովի ընդարձակ ուսումնասիրութունը, որը կրում է հետևյալ վերնագիրը՝ «Հետդիրը վրացերենում»: Ուսումնասիրութունը կա-տարված է նոր տեսանկյունով, ընդ որում հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետ-դիրները գալիս են առանձին, անկախ նշա-նակութուն ունեցող բառերից՝ ձևա-իմաս-տային որոշ փոփոխութունների ենթարկ-վելով: Այդ ախտի առանձին բառերը հաճա-

խակի գործածութունից ժամանակի ըն-թացքում այնպես են փոփոխվում ձևով ու բովանդակութեամբ, որ ի վերջո դառնում են մասնիկներ: Պատմականորեն հետդիրնե-րը երբ այլ բառերին են միանում. կորցը-նում ես իրենց անկախ նշանակութունը և այդպիսով ազդեցութուն են գործում ա-նունների հոլովման սիստեմի վրա՝ որոշ դեպքերում գուբս մղելով նույնիսկ մի քա-նի անկախ հոլովներ, ինչպես օր՝ Ֆրանսե-րենում և անգլերենում: Նախդիրների խըն-դիրը վրացերենում, սակայն, մանրամաս-նորեն ուսումնասիրված չի եղել: Հեղինակը տալիս է վրաց հետդիրները, պարզում է նրանց Փունկցիաները պատմականորեն և տալիս է ստուգաբանութուններ որոշ գու-գուհետներ անցկացնելով նաև հայերենի նախդիրների հետ: Այստեղ պարզ երևում է մի շարք հետդիրների ծագումը առանձին, անկախ բառերից: Հեղինակի մոտ օգտա-գործված են վրաց գրական հուշարձանները-սկսած V դարից մինչև մեր օրերը՝, օրի-նակները բերված են նաև ժամանակակից սո-վետական դրակտնութունից:

Հին վրացերենի մի շարք մասնիկների ու կապերի նշանակութեան լուսարանման է նվիրված Թիմաթին Դաուխչիւլիու հոդվածը՝ «Հին վրացերենի մի քանի մասնիկների և կապերի մասին»: Ղրանց նշանակութունը հեղինակը պարզում է հունարենի, գրաբարի համամատութեան ուղիով և հանում եզրա-կացութուններ: Փաստերը վերլուծված են սպառիչ կերպով:

Սվաներենի բացասական մասնիկները, որ մինչև օրս ուսումնասիրված չէին, ուսումնա-սիրութեան է ենթարկել Թիմաթին Եարածե-նիսն իր «Բացասական մասնիկները սվա-ներենում» հոդվածում: Փարթվելական լե-զուներից սվաներենը ամենից հարուստ է բացասական կամ ժխտական մասնիկներով, որոնց թիվը հասնում է քառասունի: Ըստ նշանակութեան, զրանք բաժանվում են երեք խմբի և համապատասխանում են վրաց. աւ. ճու և վեւ ժխտական մասնիկներին, իոկ ըոտ կառուցվածքի զրանք լինում են պարզ և բարդ: Ըստ հնչյունական կողմի զրանք բա-ժանվում են ձայնավորների և բազաձայն-ների: Միևնույն բազաձայնները ցույց են տալիս ժխտում ինչպես մյուս կովկասյան, այնպես էլ այլ լեզուներում (հնգեվրոպական, սեմական, քամյան, ուրալո-ալտայան լեզու-ներում): Պարզ է, որ այստեղ մենք, ինչպես ճիշտ կերպով եզրակացնում է հեղինակը, գործ ունենք ոչ թե փոխառութեան, այլ ընդհանուր լեզվամատածագութեան հետ կապ-

ված՝ համանման լեզվակազմի իրողությունների առաջացման հետ միևնույն պայմաններում:

Վրաց լեզվի շարահյուսությունը լեզվաբանության մեջ ավելի քիչ ուսումնասիրված բնագավառ է, դրա համար էլ, այդ ուղղությամբ տարված ամեն մի աշխատություն իր ուրույն նշանակությունն ունի: Այս տեսակետից ուշագրավ է Աճեոն Կիզիբայի հոդվածը «Սեռական հատկացուցիչի հարաբերությունը հատկացյալի հետ»: Վերլուծման է ենթարկված առաջ նյութ և կասկած չեն հարուցում հեղինակի համոզիչ ու հետաքրքրական կրակացությունները:

Պակաս ուշագրավ չէ Վուկոյ Բլիվեի ոտուգարանական հետազոտությունը՝ «Զուգեբառի և նրանից կազմված օբյեկտիվի նշանակության էվոլյուցիայի մասին»: Չքուզե վրացերենում նախապես նշանակել է «պարիսպ, ամրություն», այն ժամանակ օբյեկտիվի նշանակում է «պարսպված, ամրացված, հաստատված»: հետագայում օբյեկտիվի ստացել է սահմանափակված, նեղված նշանակությունը, որ նոր հասկացողությունն է, ընդամենը չորս-հինգ տասնյակ տարվա (օր. Սարայի ու Չուրիկովի բառարանները այդ չգիտեն): Հեղինակը միանգամայն համոզիչ կերպով է պարզում հին վրացերենի գրավոր հուշարձանների հիման վրա այն որ օբյեկտիվի նախապես նշանակել է «պարսպված, ամրացված, հաստատված»: Այս բառի արմատն է զղուլի «պարիսպ, սահման դնող ամրություն»:

Քարթվելական լեզուների և ուսիբերեն լեզվի գուղաղիպույունների մասին այս ժողովածուի մեջ առանձին հոդվածով հանդես է կկել Վլադիմիր Փանչվիձեն: Այդ ուսումնասիրությունը հեղինակը կոչում է «Ուսիբերեն լեզվի ձևաբանական զուգաղիպույունները վրացերեն—քարթվելական լեզուների հետ», որտեղ նախ ցույց է տրված կառուցվածքային բնույթի զուգաղիպույուններն ինչպես անուններում, այնպես էլ բայի բերականական կատեգորիաներում, և ապա քարթվելական լեզուների ունեցած հնչյունաբանական բնույթի զուգաղիպույունները, որոնք ավելի նշանակալից են և հեղինակին ենթադրել են տալիս այդ լեզուների ազգակցական կապը: Այս բնույթի զուգաղիպույունները երևում են անունների ու բայի ձևաբանության մեջ

Ուրիշ սիստեմի լեզուների հետ քարթվելական լեզուների ունեցած փոխհարաբերության խնդրին է նվիրված Սիմոն Ղաուխչիշվիլու աշխատությունը, «Հունա-վրացական իմաստաբանական զուգաղիպույունները»:

որ ուշագրավ է ոչ միայն հունա-վրացական փոխադարձ կապն ուսումնասիրելու, այլև ընդհանուր լատաղիտության տեսակետից որքանով այդ հոդվածի մեջ վերլուծված են աչքի ընկնող նմուշներ իմաստաբանության ընդհանուր կանոնների ցուցադրումով:

Իրանյան լեզվի հետ վրացերենի ունեցած փոխհարաբերության տեսակետից ուշագրություն արժանի է Մղիա Աճերոսիկուշվիլու՝ «Իրանական ծագում ունեցող վրացերեն մի քանի բառերի ստուգաբանության շուրջը» հոդվածը, որտեղ քննության են տոնված վրացերեն այնպիսի բառեր, որոնց արմատները կապվում են իրանյան համապատասխան արմատների հետ (որոնք վաղ շրջանի նեոթափանցումների արդյունք են): Այդպիսի բառերից են՝ վրաց. ալմաուրի «ազնվական», կեմակի «ստատանա», բուրգվի «բլրակ», մ-արք-այի «արդար», նաձվի «նճի», փարթո «փարթամ», ցուու «սին», հիմար, մարիվա «պաս»: Հետաքրքրական է, որ միևնույն արմատն են ունեցել վրաց. լրձաֆերա «հրաման» և բրոնի «իմաստուն» բառերը: Այսպիսի բառական կապ եղել է նաև արաբերենի հետ:

Քուրթական լեզուներում եղած քարթվելական լեզուների տարբերին է նվիրել Սերգի Ղիխան իր «Կոնկետիվ աշխատանքի վրացական մի տերմին թուրքական լեզուներում» ուսումնասիրությունը: Վրաստանը անցյալում գյուղատնտեսության զարգացման բնագավառում առաջատար դեր է կատարել ոչ միայն Անդրկովկասում և Հյուս. կովկասում, այլև, ինչպես Սերգի Ղիխայի հոդվածից է երևում, նաև արեելյան Անատոլիայի թուրքական ազգաբնակչության մեջ, ընդ որում թուրքերը լազերից յուրացրել են եզրապատգոյունի մշակույթը և կոչել են լազուլի «եզրապատգոյուն»: Այսպես նաև յուրացրել են մոդղամի «զիվորակից, պաշտոնակից, ընկերակից», որի նշանակությունը պարզում է հեղինակը վկայակոչելով մի շարք հեղինակներ:

Հին վրացերենը պահպանել է ռոմանսի բառը, որի մասին ակադ. Ն. Մառը հետևյալ միտքն է արտահայտել. այս բառի առաջին մասը ռոմո նշանակել է «զգաման», փխր. թաս (երկրորդ մասն է՝ ձև): Մոռոմ բառի մեզրելիքներն—ճաներեն ծագման մասին ենթադրաբար խոսել է Ն. Մառը, քանի որ համապատասխան ձևա-իմաստային համարժեք չէր գտնում մեզրելիքներ-ճաներենում [նման բառ պահպանել է նաև պարսկերենը ռոուրամ]: Արդ՝ Ն. Մառի ենթադրաբար արտահայտած մտքի ուսու իրականացումը մեք գանում ենք Մակար Խաբուայի փոքրիկ հոդ-

վածում, որ գետեղված է այս ժողովածուի մեջ: Նա մատնացույց է անում մեզը չորումս «դինի խմելու աման» բառը, որն օգտագործում են մեզրելիները հարրած ժամանակ: Սրանք համընկնում են ինչպես հնչյունաբանորեն, այնպես էլ բովանդակության տեսակետից:

Ժողովածուն եզրափակվում է Գլուրգլու Տուր-
անիմովի «Պլաստիկ ժամանակաշրջանի գրող-
ների ֆեմիստ-տիպ» հոդվածով, որով հեղինակը
պարզում է Կոլխեթի մի էթնիկական միա-
վորի գեմբը:

«Իրերական - կովկասյան լեզվաբանու-
թյուն» ժողովածուի 1-ին գրքում գետեղված
գիտական աշխատությունները իրենց բովան-
դակությամբ ու մշակվածությամբ բարձրո-
րակ են, մեծարժեք ու հետաքրքրական ընդ-
հանրապես լեզվաբանության և հատկապես
կովկասագիտության համար, խնդիրները
քննված են ու լուծված հարուստ փաստա-
կան նյութի հիման վրա ու հաշվի են
առնված բազմաթիվ լեզուների փոխադարձ
կապը:

Ա. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ